ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՏԱՆՁՈՒՏԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ

РЕСПУЛИКА АРМЕНИЯ
АРМАВИРСКИЙ МАРЗ
ТАНДЗУТСКИЙ МУНИЦИПОЛИТЕТ

թիվ 128
14նոյեմբերի 2012թ,

Արմավիրի մարզպետ

պարոն Ա.Ղահրամանյանին

Հարգարժան պարոն մարզպետ

Ձեզ է ներկայացվում է Տանձուտ համայնքի ավագանու 2012թվականի նոյեմբերի 9-ի թիվ 1 անդրանիկ նիստում ընդունված որոշումները:

Առդիր 11 թերթ:

համայնքի ղեկավար՝ Մ.Պետրոսյան

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
Մուտք թիվ 1064-12
«12» 11 2012թ.

Հավելված
ՀՀ Արմավիրի մարզի
Տանձուտ գյուղական համայնքի
ավագանու 2012թվականի նոյեմբերի 9-ի
թիվ 1 որոշման

Օ Ր Ա Կ Ա Ր Գ Ի Մ

1.Օրակարգը հաստատելու մասին
/զեկ. Մ.Հովհաննիսյան/

2.Ավագանու կանոնակարգի ընդունման մասին
/զեկ. Մ. Պետրոսյան/

3.Համայնքային ծառայության մրցույթային և ատեստավորման հանձնաժողովների կազմում ավագանու անդամների քանակական և անհատական կազմերը որոշելու և համայնքի ավագանու 2009թվաականի ապրիլի 29-ի թիվ N 3 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին
/զեկ. Մ. Պետրոսյան/

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՏԱՆՁՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ

9նոյեմբերի2012թ. թիվ 1

ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով « Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ մասով

որոշեց՝

1.Հաստատել 2012թվականի նոյեմբերի 9-ի թիվ 1 անդրանիկ նիստի օրակարգը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Ավագանու անդամներ	կողմ	դեմ	ձեռնպահ
Արտակ Հերիքյան			
Արմեն Խաչատրյան			
Հայկ Գրիգորյան			
Տիգրան Սարգսյան			
Լևոն Թադևոսյան			
Գեղամ Պողոսյան			
Ավագ Միքայելյան			

Համայնքի ղեկավար Մ. Պետրոսյան

2012թվական
նոյեմբերի 9
գ. Տանձուտ

Հավելված
ՀՀ Արմավիրի մարզի
Տանձուտ գյուղական համայնքի
ավագանու 2012թվականի նոյեմբերի 9-ի
թիվ Յորոշման

կազմ

Համայնքային ծառայության մրցույթային և ատեստավորման հանձնաժողովի կազմում ընդգրկված ավագանու անդամների

Խաչատրյան Արմեն

Սարգսյան Տիգրան

Հերիքյան Արտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՏԱՆՁՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ

9 նոյեմբերի2012թ. թիվ 3

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒՅԹԱՅԻՆ ԵՎ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ ԿԱԶՄՈՒՄ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՔԱՆԱԿԱԿԱՆ ԵՎ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԵՐԸ ՈՐՈՇԵԼՈՒ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2009ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 29-Ի N 3 ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Համայնքային ծառայության մասին> Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի երկրորդ մասով, <Իրավական ակտերի մասին> Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի <բ> ենթակետով, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը

որոշեց՝

1.Տանձուտի գյուղապետարանի համայնքային ծառայության մրցույթային և ատեստավորման հանձնաժողովի կազմում ընդգրկել ավագանու թվով 3 անդամ՝ համաձայն հավելվածի:

2.Ուժը կորցրած ճանաչել համայնքի ավագանու 2009թվականի ապրիլի 4-ի <<Համայնքային ծառայության մրցույթային և ատեստավորման հանձնաժողովների կազմում ավագանու անդամների քանակական և անհատական կազմերը որոշելու մասին> N 3 որոշումը:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Ավագանու անդամներ	կողմ	դեմ	ձեռնպահ
Արտակ Հերիքյան			
Արմեն Խաչատրյան			
Հայկ Գրիգորյան			
Տիգրան Սարգսյան			
Լևոն Թադևոսյան			
Գեղամ Պողոսյան			
Ավագ Միքայելյան			

Համայնքի ղեկավար Մ. Պետրոսյան

2012թվական
նոյեմբերի 9
գ. Տանձուտ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՏԱՆՁՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ

9նոյեմբերի2012թ. թիվ 2-Ն

ԱՎԱԳԱՆՈՒ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԸ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <Տեղական ինքնակառավարման մասին> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով

որոշեց՝

1. Ընդունել համայնքի ավագանու կանոնակարգը՝ համաձայն հավելվածի:

2.Սույն որոշումն ուժ մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Ավագանու անդամներ	կողմ	դեմ	ձեռնպահ
Արտակ Հերիքյան			
Արմեն Խաչատրյան			
Հայկ Գրիգորյան			
Տիգրան Սարգսյան			
Լևոն Թադևոսյան			
Գեղամ Պողոսյան			
Ավագ Միքայելյան			

Համայնքի ղեկավար Մ. Պետրոսյան

2012թվական
նոյեմբերի 9
գ. Տանձուտ

Հավելված
ՀՀ Արմավիրի մարզի
Տանձուտ գյուղական համայնքի
ավագանու 2012թվականի նոյեմբերի 9-ի
թիվ 2-Ն որոշման

Համայնքի ավագանու կանոնակարգ

1.Ընդհանուր դրույթներ

1.Սույն կանոնակարգն ընդունված է <Տեղական ինքնակառավարման մասին> Հայաստանի Հանրապետության օրենքի հիման վրա:
2.Համայնքի ավագանին իրականացնում է Սահմանադրությամբ և <<Տեղական ինքնակառավարման մասին> Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված լիազորությունները և գործում է սույն կանոնակարգին համապատասխան;
3.Համայնքի ավագանին իր գործունեությունն իրականացնում է նիստերի միջոցով:
4.Ավագանու նիստերը դռնբաց են:
5.Ավագանու աշխատանքը տարվում է հայերեն:
6.Ավագանու նիստում կարող են քննարկվել համայնքի շահերին վերաբերվող ցանկացած հարց: Քննարկվող հարցերի վերաբերյալ ավագանին կարող է ընդունել որոշումներ և ուղերձներ:
7.Համայնքի շահերին վերաբերվող, բայց իր իրավասությունից դուրս գտնվող հարցերի կապակցությամբ ավագանին կարող է ընդունել ուղերձներ ուղղված համայնքի բնակչությանը, համայնքի ղեկավարին, մարզպետին և պետական այլ մարմիններին:

2.Համայնքի ավագանու գործունեության կազմակերպումը

8.Համայնքի ավագանին կազմավորված է համարվում, եթե ընտրվել են ավագանու անդամների օրենքով սահմանված թվի կեսից ավելին:
9.Համայնքի ավագանին ընդունում է կանոնակարգ, որը կարգավորում է ավագանու գործունեությունը, նիստերի նախապատրաստումը և անցկացումը: Ավագանու նիստերն անցկացվում են ոչ պակաս, քան երկու ամիսը մեկ անգամ փետրվար, ապրիլ, հունիս, օգոստոս, հոկտեմբեր, դեկտեմբեր ամիսների վերջին չորեքշաբթի օրերը ժամը 11-00-ին:Ավագանին կարող է անցկացնել արտա-հերթ նիստեր:
10.Համայնքի ավագանին իրեն վերապահված լիազորությունների իրականացման համար իր որոշմամբ կարող է ստեղծել մշտական գործող կամ ժամանա-կավոր հանձնաժողովներ:
11.Համայնքի ղեկավարը համայնքի նստավայրում անհրաժեշտ պայմաններ է ստեղծում համայնքի ավագանու սույն օրենքով ինչպես նաև ավագանու կանոնակարգով նախատեսված կարգով գործունեության իրականացման համար :
12.Ավագանու նիստում կարող է քննարկվել համայնքի շահերին վերաբերվող ցանկացած հարց :Քննարկվող հարցերի վերաբերյալ ավագանին ընդունում է որոշումներ և ուղերձներ:Սույն օրենքով սահմանված դեպքերում ավագանին կազմում է արձանագրություններ:
13.Համայնքի շահերին վերաբերվող, բայց իր իրավասությունից դուրս գտնվող հարցերի կապակցությամբ ավագանին կարող է ընդունել ուղերձներ ուղղված համայնքի բնակչությանը, համայնքի ղեկավարին, մարզպետին և պետական այլ մարմիններին:

14.Պետական մարմինները կամ համայնքի ղեկավարն ավագանու ընդունած ուղերձն ստանալու օրվանից մեկ ամսյա ժամկետում պարտավոր են քննության առնել և արդյունքների մասին պաշտոնապես տեղեկացնել ավագանուն:

3.Համայնքի ավագանու նիստերի օրակարգը և որոշման նախագծերի նախապատրաստումը

15.Համայնքի ավագանու նիստերի օրակարգի նախագիծը ձևավորում են համայնքի ղեկավարը և ավագանու անդամները `գյուղապետարանի աշխատակազմի քարտուղարին նիստից առնվազն հինգ օր առաջ ներկայացրած գրավոր հարցերից:
16.Հարցերի հեղինակները պետք է ներկայացնեն որոշման նախագծեր: Յուրաքանչյուր նախագծին կցվում են դրա ընդունման անհրաժեշտության հիմնավորումները և յուրաքանչյուր որոշման նախագծի իրականացման ֆինանսական ծախսերի նախահաշիվները:
17.Նիստի օրակարգի նախագիծը,դրանում ընդգրկված հարցերի որոշման նախագծերը և համապատասխան փաստաթղթերը նիստն սկսելուց առնվազն երեք օր առաջ տրամադրվում են ավագանու անդամներին:
18.Նիստի օրակարգը հաստատվում է համայնքի ավագանու որոշմամբ:

4.Նորընտիր ավագանու առաջին նիստը

19. Նորընտիր ավագանու առաջին նիստը գումարվում է ոչ ուշ քան ավագանու լիազորությունները ստանձնելու պահից քսան օրվա ընթացքում:

5.Համայնքի ավագանու նիստը

20.Համայնքի ավագանու նիստը հրավիրում և վարում է համայնքի ղեկավարը կամ պաշտոնակատարը,նրանք ունեն խորհրդակցական ձայնի իրավունք:
21.Համայնքի ավագանու նիստն իրավազոր է, եթե նիստին ներկա են ավագանու անդամների կեսից ավելին: Եթե կես ժամվա ընթացքում չի ապահովվում նիստի իրավազորությունը ,կամ նիստին չի ներկայանում համայնքի ղեկավարը և նիստը չի սկսվում, ապա նիստի չկայացման մասին կազմվում է արձանագրություն ,որն ստորագրում են ավագանու նիստին ներկայացած անդամները:
22.Համայնքի ավագանու որոշումները և ուղերձները ընդունվում են ավագանու նիստին ներկա անդամների ձայների մեծամասնությամբ:
23.Համայնքի ավագանու որոշման մեջ նշվում են որոշման նախագծին կողմ դեմ և ձեռնպահ քվեարկած ավագանու անդամների ազգանունները ,որոնց դիմաց նրանք ստորագրում են: Համայնքի ավագանու որոշումը կնքում է համայնքի ղեկավարը:
24.Համայնքի ավագանու նիստը շարունակվում է մինչև օրակարգի սպառումը: Նիստը կարող է ընդհատվել ավագանու որոշմամբ կամ սույն օրենքով նախատեսված դեպքերում:
25.Համայնքի ավագանու նիստը դռնբաց է :Առանձին դեպքում ավագանու նիստին ներկա անդամների ձայների երկու երրորդի որոշմամբ կարող է անցկացվել դռնփակ նիստ :
26.Համայնքի ավագանին նիստին կարող է հրավիրել և լսել ցանկացած անձի: Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում են գյուղապետարանի աշխատակազմի աշխատակիցները:

27.Համայնքի ավագանու որոշումների վերաբերյալ համայնքի ղեկավարը եռօրյա ժամկետում ավագանուն կարող է ներկայացնել գրավոր առարկություններ և առաջարկություններ՝ համապատասխան հիմնանորում-ներով , եթե ավագանու որոշումը իր կարծիքով հակասում է օրենքին կամ ավագանու նախկին որոշումներին:

28.Եթե համայնքի ղեկավարն ավագանու որոշման դեմ առարկում է ,ապա եռօրյա ժամկետում հրավիրում է ավագանու արտահերթ նիստ, իսկ որոշման կատարումը հետաձգում է մինչև այդ նիստում ավագանու կողմից դրա քննարկումը:Ավագանին քննարկում է նշված առարկությունները և որոշում է ընդունում նիստին ներկա ավագանու անդամների ձայների մեծամասնությամբ:Նշված նիստում և նախատեսված ժամկետներում որոշումը չվերանայելու կամ ավագանու նիստը չկայանալու դեպքում որոշումն ուժի մեջ է մտնում և ենթակա է պարտադիր կատարման:

29.Համայնքի ավագանու որոշումը համայնքի ղեկավարը կարող է բողոքարկել դատական կարգով:

6.Համայնքի ավագանու անդամի իրավունքները

30. Համայնքի ավագանու անդամն իրավունք ունի՝

1/առաջարկություններ ներկայացնել ավագանու նիստերի օրակարգի և քննարկվող հարցերի վերաբերյալ

2/նախապատրաստել և ավագանու քննարկմանը ներկայացնել հարցեր,որոշումների և ուղերձների նախագծեր

3/համայնքի ղեկավարից պահանջել և ստանալ նրա գործունեության վերաբերյալ պաշտոնական տեղեկանքներ

4/համայնքի ավագանու և համայնքի ղեկավարի որոշումները կամ գործողությունները բողոքարկել դատարան ,եթե խախտվել են նրա որպես ավագանու անդամի իրավունքները

5/ստանալ դրամական փոխհատուցում սույն օրենքով սահմանած կարգով իր պարտականություններն իրականացնելու հետևանքով կատարած ծախսերի դիմաց :

7.Համայնքի ավագանու անդամի պարտականությունները

31.Համայնքի ավագանու անդամը պարտավոր է իր գործունեության ընթացքում առաջնորդվել օրենքով և համայնքի բարօրությանն ուղղված համոզմունքով:

Համայնքի ավագանու անդամը պարտավոր է՝

1/ մասնակցել ավագանու նիստերին

2/ պարբերաբար հանդիպել համայնքի բնակչության հետ, համայնքի ընտրողներին տեղեկացնել համայնքի ավագանու աշխատանքների մասին

3/մասնակցել ավագանու կողմից անցկացվող քաղաքացիների ընդունելություններին

4/չմասնակցել ավագանու այն որոշման քվեարկությանը, որն առնչվում է իր ընտանիքի անդամների և մերձավոր բարեկամների /ծնող, քույր, եղբայր, երեխա/ շահերին

5/անհամատեղելի պաշտոններում ընտրվելու կամ նշանակվելու դեպքում անհապաղ գրավոր տեղյակ պահել ավագանուն կամ համայնքի ղեկավարին:

8. Համայնքի ավագանու անդամի լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը

32.Համայնքի ավագանու անդամի լիազորությունները վաղաժամկետ դադարեցվում են, եթե՝

1/դադարեցվել է նրա Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը:

2/նա դադարել է համայնքի բնակիչ լինելուց:

3/դատարանի օրինական ուժի մեջ մտած մեղադրական դատավճռով նա դատապարտվել է ազատազրկման և կրում է պատիժը:
4/նա զորակոչվել կամ ծառայության է անցել զինված ուժերում;
5/դատարանի օրինական ուժի մեջ մտած վճռով նա անգործունակ, սահմանափակ գործունակ, անհայտ բացակայող կամ մահացած է ճանաչվել:
6/նա ավագանու անդամության հետ անհամատեղելի պաշտոն է զբաղեցնում:
7/նա մեկ տարվա ընթացքում անհարգելի պատճառով բացակայել է ավագանու նիստերի կամ քվեարկությունների ավելի քան կեսից:
8/նա հրաժարական է տվել:
9/նա մահացել է:

33.բացառությամբ սույն հոդվածի 9-րդ կետի, սույն հոդվածով նախատեսված դեպքերում ավագանու անդամի լիազորությունները վաղաժամկետ դադարեցվում են ավագանու որոշմամբ: Նիստ գումարելու անհնարինության դեպքում ավագանու մյուս անդամները կազմում են ավագանու անդամի լիազորությունների դադարեցման մասին արձանագրություն:

9.Համայնքի բյուջեն

34.Համայնքի բյուջեն եկամուտների /մուտքերի/ ձևավորման և ծախսման մեկ տարվա ֆինանսական ծրագիրն է, որը նպատակաուղղվում է համայնքի եռամյա զարգացման ծրագրի և համայնքի օրենքով վերապահված լիազորությունների իրականացմանը:

35.Յուրաքանչյուր տարի համայնքի բյուջեն հաստատում է համայնքի ավագանին: Ավագանին համայնքի բյուջեում փոփոխություններ է կատարում համայնքի ղեկավարի նախաձեռնությամբ: Համայնքի բյուջեի կատարման հաշվետվությունը հաստատում է ավագանին:
36. Համայնքի բյուջեն բաղկացած է վարչական և ֆոնդային մասերից: Համայնքի բյուջեն իրականացվում է օրենքով սահմանված կարգով:

10. Համայնքի բյուջեի քննարկումը և հաստատումը

37.Համայնքի ղեկավարը համայնքի բյուջեի նախագիծը համայնքի ավագանու քննարկմանն է ներկայացնում կառավարության կողմից ֆինանսական համահարթեցման սկզբունքով համայնքներին տրամադրվող դոտացիաների նախնական թվերի հրապարակումից հետո երկամսյա ժամկետում : Բյուջեի նախագիծն ավագանու անդամներին է ուղարկվում քննարկումից առնվազն մեկ շաբաթ առաջ: Եթե պետական բյուջեն ընդունելիս ֆինանսական համահարթեցման սկզբունքով համայնքներին տրամադրվող դոտացիաների նախնական թվերը փոփոխվում են, ապա համայնքի ղեկավարը երկշաբաթյա ժամկետում ավագանու հաստատմանն է ներկայացնում բյուջեի համապատասխան փոփոխությունները :
38.Համայնքի ղեկավարը համայնքի ավագանուն ներկայացնում է բյուջեի նախագիծը պատասխանում է ավագանու անդամների հարցերին :
39.Համայնքի ավագանու անդամները բյուջեի նախագծի վերաբերյալ կարող են ներկայացնել գրավոր առաջարկություններ, որոնք քննարկվում են ավագանու նիստում: Եթե ավագանու անդամի առաջարկությունը նախատեսվում է նոր ծախսեր, ապա նա պարտավոր է նշել համապատասխան ֆինանսական միջոցների աղբյուրներ: Համայնքի ղեկավարը քննարկումից հետո կարող է վերցնել մինչև մեկ շաբաթ ժամանակ ներկայացրած նախագծի մեջ համապատասխան փոփոխություններ և լրացումներ կատարելու համար:
40.Նշված ժամկետում համայնքի ղեկավարը հրավիրում է համայնքի ավագանու նիստ և ներկայացնում է իր դիրքորոշումը բյուջեի ավագանու առաջարկած

բյուջետային օրենսդրությամբ սահմանված ժամկետում բյուջեի ընթացքի մասին հաղորդումներ է ներկայացնում համայնքի ավագանուն:

52. Բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը համայնքի ավագանուն ներկայացվում է բյուջետային տարին ավարտելուց հետո հաջորդ տարվա համայնքային բյուջեի եռամսյակային կատարման տարեկան հաշվետվության վերաբերյալ հաղորդման հետ միասին :

53. Համայնքի ղեկավարի ներկայացրած բյուջեի կատարման տարեկան հաշվետվության վերաբերյալ աուդիտորական վերաստուգիչ մարմինը համայնքի ավագանուն ներկայացնում է իր ուսումնասիրությունների արդյունքները և եզրակացությունը:

54. Համանքի ավագանու նիստում համայնքի ղեկավարը պատասխանում է ավագանիների հարցերին և տալիս է անհրաժեշտ բացատրություններ:

55. Համայնքի ավագանին բյուջեի կատարման տարեկան հաշվետվության վերաբերյալ կարող է անցկացնել նաև անկախ աուդիտ, իսկ հայտնաբերելու դեպքում դիմել համապատասխան իրավասու մարմիններ:

56. Համայնքի ավագանին քննարկումն ավարտելուց հետո որոշում է կայացնում բյուջեի կատարման հաշվետվությունը հաստատելու մասին:

57. Համայնքի ավագանու նիստում համայնքի բյուջեի կատարման տարեկան հաշվետվության քննարկման կարգը սահմանվում է համայնքի ավագանու կանոնակարգով:

58. Համայնքի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը, ինչպես նաև համայնքի ավագանու կողմից այդ հաշվետվության քննարկման և հաստատման ժամկետը սահմանվում է Հայաստանի Հանրապետության բյուջետայի օրենսդրությամբ:

59. Համայնքի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը, չհաստատելու դեպքում համայնքի ավագանին, օրենքով սահմանված կարգով, կարող է համայնքի ղեկավարին պաշտոնանկ անելու մասին առաջարկություն ներկայացնել: Եթե համայնքի ղեկավարին պաշտոնանկ անելու մասին առաջարկություն չի ներկայացվում, կամ կառավարությունը ղեկավարին պաշտոնանկ անելու մասին առաջարկությունն օրենքով սահնանված կարգով չի ընդունում, ապա համայնքի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը համարվում է հաստատված:

60. Համայնքի ղեկավարին պաշտոնանկ անելու մասին որոշում ընդունվելու դեպքում համայնքի ղեկավարը, օրենքով սահմանված կարգով վայր է դնում իր լիազորությունները, իսկ համայնքի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը համարվում է հաստատված:

61. Համայնքի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունների քննարկման և հաստատման հետ կապված սույն օրենքով չկարգավորված հարցերը կանոնակարգվում են Հայաստանի Հանրապետության բյուջետային օրենսդրությամբ:

փոփոխությունների վերաբերյալ: Բյուջեի նախագիծը համայնքի ղեկավարի ընդունած փոփոխություններով քվեարկության է դրվում ամբողջությամբ: Չընդունելու դեպքում նոր բյուջեի նախագծի քննարկման ժամկետները կարող է որոշել համայնքի ավագանին համաձայնեցնելով համայնքի ղեկավարի հետ, կամ համայնքի ղեկավարը հրավիրելով արտահերթ նիստ:

41.Եթե ավագանին մինչև տարվա վերջը համայնքի բյուջեն չի ընդունում ապա ծախսերը կատարում են նախորդ տարվա բյուջեի համամասնություններով: Այդ դեպքում համայնքի ղեկավարը պարտավոր է կատարել նախկինում կնքած պայմանագրերից բխող պարտավորությունները, չիրականացնելով նոր ներդրումներ, իսկ ծախսերը կատարել նախորդ տարվա յուրաքանչյուր ամսում կատարված ծախսերից ոչ ավելի:

42.Պետական լիազորված մարմինը և մարզպետարանը մեթոդական և խորհրդատվական օգնություն են ցույց տալիս համայնքի բյուջեի նախագծի մշակման նախապատրաստման ընթացքում, ինչպես նաև օրենքով սահմանված կարգով վերահսկվում է բյուջետային գործընթացը:

43. Համայնքի բյուջեն կազմելու և ներկայացնելու կարգը սահմանված է Հայաստանի Հանրապետության բյուջետային օրենսդրությամբ:

44. Համայնքի բյուջեի չհաստատելու դեպքում համայնքի ղեկավարը կարող է դնել հրաժարական տալու միջոցով իր լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելու հարցը: Եթե համայնքի ավագանին համայնքի ղեկավարի հրաժարականի վերաբերյալ դիմումն ստանալուց հետո եռօրյա ժամկետում, ավագանու անդամների թվի ծայների կեսից ավելով նման որոշում չի ընդունում, ապա բյուջեն համարվում է հաստատված համայնքի ղեկավարի կատարած ուղղումներով:

45. Համայնքի բյուջեի հաստատման առընչությամբ հրաժարական տալու միջոցով համայնքի ղեկավարի լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելու վերաբերյալ համայնքի ավագանու որոշում կայացնելու դեպքում համապատասխան մարզպետը հարցը ներկայացնում է կառավարություն օրենքով սահմանված կարգով :

46.Եթե դիմումն ստանալուց հետո՝ մեկ ամսվա ընթացքում կառավարությունը նման որոշում չի կայացնում, ապա համայնքի բյուջեն համարվում է հաստատված համայնքի ղեկավարի կատարած ուղղումներով:

47.Համայնքի ղեկավարի՝ կառավարության պահանջով հրաժարական տալու դեպքում, լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելիս համայնքի նոր ղեկավարը համայնքի ավագանուն բյուջեի նախագիծ է ներկայացնում քսան օրվա ընթացքում:

48.Ավագանիների կողմից համայնքի բյուջեների քննարկման և հաստատման հետ կապված սույն օրենքով չկարգավորված հարցերը կանոնակարգվում են Հայաստանի Հանրապետության բյուջետային օրենսդրությամբ:

11. Համայնքի բյուջեի կատարման վերահսկողությունը

49. Համայնքի բյուջեի կատարման վերահսկողությունն իրականացնում է համայնքի ավագանին, որն իրավազոր է ստուգել ցանկացած բյուջետային գործողություն, աշխատանքների կատարման արդյունավետությունը և որակը, պահանջել հաշվետվություններ կատարած ծախսերի վերաբերյալ:

50. Բյուջեի կատարման վերահսկողությունը մշտապես և արդյունավետ իրականացնելու նպատակով համայնքի ավագանին կարող է սահմանված կարգով ներգրավել աուդիտորական ծառայություններ, որոնց դիմաց վճարումը կատարվում է համայնքային բյուջեից:

12.Համայնքի բյուջեի կատարման հաշվետվության հաստատումը

51. Համայնքի ղեկավարը եռամսյակը մեկ անգամ Հայաստանի Հանրապետության